Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**8. Եզրափակիչ դրույթներ**

**8.1.** Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Հիմնական և Հատուկ պայմանների ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով: Պայմանագրի ամսական ծառայությունների հաշվարկումն ուժի մեջ է մտնում հեռախոսահամարների առաջին միացման հանձման – ընդունման ակտի կնքման օրվանից:
**8.2.** Սույն պայմանագրով նախատեսված դեպքերից բացի պայմանագիրը կարող է լուծարվել նաև Բաժանորդի կողմից՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Օպերատորին առնվազն 30 (երեսուն) օր առաջ:
**8.3** Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Օպերատորը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Օպերատորին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Բաժանորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Բաժանորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Օպերատորի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Օպերատորը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Բաժանորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Բաժանորդի ստացածով:
8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կամ Հատուկ պայմանների հերթական հավելված կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:
Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝
1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:
2) սույն պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:
Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:
Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Բաժանորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:
8.5 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Օպերատոր և (կամ) Բաժանորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:
Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ

պայմանագրի կատարման շրջանակում Օպերատորի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Օպերատորը:

8.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

8.7 Սույն պայմանագիրը կազմված է 8 էջից (Հիմնական պայմանները՝ 7 էջ, Հատուկ պայմանները (Հավելված N3-ի տեսքով)՝ 1 էջ), կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N1 և N2 հավելվածները (յուրաքանչյուրը 1-ական էջ) հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

Բաժանորդի հավաստումը

Սույնով հավաստում եմ, որ

- ամբողջությամբ ծանոթացել եմ Հիմնական պայմաններին, ընդունում եմ դրանք, տեղյակ եմ բաժանորդի իրավունքներին և պարտականություններին, ծառայությունների դիմաց վճարումների իրականացման կարգին և խախտումների հետևանքներին:
- Հատուկ պայմանների ստորագրմամբ Պայմանագիրը ուժի մեջ կլինի

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԱՆՈՐԴ՝

ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ

Աշխատակազմի ղեկավար ____________ Վ.Հարությունյան
/ստորագրություն/ Կ.Տ.

ՕՊԵՐԱՏՈՐ՝

«ՔՐՈՍՄՆԵԹ» ՍՊԸ

Տնօրեն՝ ____________ Վ.Ալեքսանյան
/ստորագրություն/ Կ.Տ.

*Հավելված N1*

*N 5348 հեռախոսային ծառայությունների մատուցման պայմանագրի*

Հեռախոսային ծառայությունների մատուցման

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է վճարել 2015թ.-ին | | | | | | | | | | | Ընդամենը /հազ.դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 1 | Հեռախոսային ծառայություններ | 4500.0 | 4500.0 | 9000.0 | 9550.0 | 10100.0 | 10650.0 | 11200.0 | 11750.0 | 12300.0 | 12800.0 | 12800.0 | 12800.0 |

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԱՆՈՐԴ՝ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ

Աշխատակազմի ղեկավար՝ ____________ Վ.Հաարաթյան
/ստորագրություն/ Կ.Տ.

ՕՊԵՐԱՏՈՐ՝ «ՔՐՈՍՍՆԵԹ» ՍՊԸ

Տնօրեն՝ ____________ Վ.Ալեքսանյան
/ստորագրություն/ Կ.Տ.

*Հավելված N2*

*N 5348 հեռախոսային ծառայությունների մատուցման պայմանագրի*

**Օպերատոր**

«ՔՐՈՍՄՆԵԹ» ՍՊԸ

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 28

Բանկը՝ «Կոնվերսբանկ» ՓԲԸ

Հ/Հ՝ 1930032490780100

ՀՎՀՀ՝ 01834381

**Բաժանորդ**

ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե

Հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Արշակունյաց 7

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Հ/Հ՝ 900013220026

ՀՎՀՀ՝ 02534328

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ...
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«...» «......» 201 թ.

Պայմանագրի անվանումը՝ Հեռախոսային ծառայությունների մատուցման պայմանագիր

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «...» «......» 201 թ.

Պայմանագրի համարը՝ N ...

Բաժանորդը՝ ի դեմս -ի, և Օպերատորը՝ ի դեմս տնօրեն Վ. Ալեքսանյանի, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ ծառայություններ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Օպերատորը __ ________ 201 թ.-ից __ ________ 201 թ. ընկած ժամանակահատվածում կատարել է հետևյալ ծառայությունները.

| Կատարված ծառայությունների անվանումը | Կատարված ծառայությունների քանակական ցուցանիշները | Ծառայությունների կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը՝ | ------------- | ---------- | | ---------- |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը:

**Հանձնեց**

________________________

Կ.Տ.

**Ընդունեց**

________________________

Կ.Տ.

Հեռախոսային ծառայությունների մատուցման պայմանագիր 20.02.2015թ. N 5348

ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հավելված 3

Կողմերը՝

**Օպերատոր՝**

«ՔՐՈՍ ՆԵԹ» ՍՊԸ, Տնօրեն. Վ.Ալեքսանյան

Լիցենզիա՝ № 0516, տրված ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից՝ 18.02.2009թ.

Հասցե՝ ք.Երևան, Կորյունի 7, գր. 3

Հեռ՝ 374 60 370000

Ֆաքս՝ 374 60 370001

ՀՎՀՀ՝ 01834381

Հ/Հ՝ 16048097516001

Բանկ՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ

և

**Բաժանորդը՝**

Անվանում՝ ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե

Աշխատակազմի ղեկավար՝ Վ. Հասրաթյան

Իրավ. հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արշակունյաց 7

Հեռ՝

Էլ-փոստ՝ gnumnercadastre@mail.ru

ՀՎՀՀ՝ 02534328

Հ/Հ՝ 900013220026

Բանկ՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ստորագրում են Հեռախոսային ծառայությունների մատուցման պայմանագրի սույն Հատուկ պայմանները հետևյալի մասին.

1. Սույն Հատուկ պայմանները և կցվող՝ Օպերատորի տնօրենի 01 մարտի 2011թ թիվ 002 Հրամանով հաստատված և Բաժանորդի կողմից ստորագրված Հիմնական պայմանները միասին վերցված կազմավորում են Հեռախոսային ծառայությունների մատուցման պայմանագիր՝ կնքված Օպերատորի և Բաժանորդի միջև:
2. Հատուկ պայմանների «Ծառայությունների նկարագիր» մասով սահմանվում են Բաժանորդին մատուցվող հիմնական և լրացուցիչ հեռախոսային ծառայությունները, դրանց համար Բաժանորդի կողմից Օպերատորին վճարման ենթակա ծառայության վճարները.
3. Հատուկ պայմանները ստորագրվում են երկու օրինակից:
4. Սույնով Բաժանորդը հավաստիացնում է, որ ամբողջությամբ ծանոթացել է և ստորագրել է «Հիմնական պայմանները», ընդունում է դրանք, տեղյակ է բաժանորդի իրավունքներին և պարտականություններին, ծառայությունների դիմաց վճարումների իրականացման կարգին և խախտումների հետևանքներին:
5. Բաժանորդը հնարավորություն ունի ստուգել նախորդ ամսվա պարտքի չափը www.cross.am վեբ կայքի միջոցով:

Ծառայությունների նկարագիր

Միանվագ ծառայություններ

| Ծառայության անվանումը | Հեռախոսի տեղադրում |
|---|---|
| Չափման միավորը | Հատ |
| Քանակը | 175 |
| Ընդամենը տեղակայման և շահագործման միանվագ ծառայություն (ՀՀ դրամ) | 7474000 |

Գները ներառում են ԱԱՀ-ն:

Հեռախոսահամարներ՝

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 474100 | 474101 | 474102 | 474103 | 474104 | 474105 | 474106 | 474107 | 474108 | 474109 |
| 474110 | 474111 | 474112 | 474113 | 474114 | 474115 | 474116 | 474117 | 474118 | 474119 |
| 474120 | 474121 | 474122 | 474123 | 474124 | 474125 | 474126 | 474127 | 474128 | 474129 |
| 474130 | 474131 | 474132 | 474133 | 474134 | 474135 | 474136 | 474137 | 474138 | 474139 |
| 474140 | 474141 | 474142 | 474143 | 474144 | 474145 | 474146 | 474147 | 474148 | 474149 |
| 474150 | 474151 | 474152 | 474153 | 474154 | 474155 | 474156 | 474157 | 474158 | 474159 |
| 474160 | 474161 | 474162 | 474163 | 474164 | 474165 | 474166 | 474167 | 474168 | 474169 |
| 474170 | 474171 | 474172 | 474173 | 474174 | 474175 | 474176 | 474177 | 474178 | 474179 |
| 474180 | 474181 | 474182 | 474183 | 474184 | 474185 | 474186 | 474187 | 474188 | 474189 |
| 474190 | 474191 | 474192 | 474193 | 474194 | 474195 | 474196 | 474197 | 474198 | 474199 |
| 474200 | 474201 | 474202 | 474203 | 474204 | 474205 | 474206 | 474207 | 474208 | 474209 |
| 474210 | 474211 | 474212 | 474213 | 474214 | 474215 | 474216 | 474217 | 474218 | 474219 |
| 474220 | 474221 | 474222 | 474223 | 474224 | 474225 | 474226 | 474227 | 474228 | 474229 |
| 474230 | 474231 | 474232 | 474233 | 474234 | 474235 | 474236 | 474237 | 474238 | 474239 |
| 474240 | 474241 | 474242 | 474243 | 474244 | 474245 | 474246 | 474247 | 474248 | 474249 |
| 474250 | 474251 | 474252 | 474253 | 474254 | 474255 | 474256 | 474257 | 474258 | 474259 |
| 474260 | 474261 | 474262 | 474263 | 474264 | 474265 | 474266 | 474267 | 474268 | 474269 |
| 474270 | 474271 | 474272 | 474273 | 474274 | | | | | |

Նշված հեռախոսահամարները 060 ոչ աշխարհագրական կոդով են:

| Տ/Պ | Քանակ | Ամսական վարձ յուրաքանչյուր հեռ-ի համար | Ընդամենը |
|---|---|---|---|
| Փաթեթ | հատ | ՀՀ դրամ | ՀՀ դրամ |
| Ի-1 | 175 | 3000 | 525000 |

Գները ներառում են ԱԱՀ-ն:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՕՊԵՐԱՏՈՐ

Տնօրեն Վ.Ալեքսանյան

Կ.Տ.

ԲԱԺԱՆՈՐԴ

Աշխատակազմի ղեկավար Վ. Հասրաթյան

Կ.Տ.